04.12.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված N 6
ՀՀ կառավարության 2020 թվականի
դեկտեմբերի 3-ի N 1976 - Ն որոշման

# Կ Ա Ր Գ

## ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀՍԿԻՉ ԴՐԱՄԱՐԿՂԱՅԻՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ, ՀԱՇՎԱՌՈՒՄԻՑ ՀԱՆՄԱՆ

1. Էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաները (այսուհետ՝ էլեկտրոնային ՀԴՄ) հարկային մարմնում գրանցելու կամ գրանցումից հանելու համար էլեկտրոնային ՀԴՄ կիրառողները հարկային մարմին ներկայացնում են դիմում՝ հարկային մարմնի հաշվետվություններ ներկայացնելու համակարգի (https://file-online.taxservice.am) միջոցով, որը մուտք գործելու համար էլեկտրոնային ՀԴՄ կիրառողները Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի (այսուհետ՝ օրենսգիրք) 310-րդ հոդվածով սահմանված կարգով պետք է գրանցված լինեն հարկային մարմնում և հարկային մարմնից ստացած լինեն մուտքի անվանում և գաղտնաբառ:

2. Էլեկտրոնային ՀԴՄ-ն հարկային մարմնում գրանցելու դիմումում լրացվում են հետևյալ տվյալները՝

1) հարկ վճարողի անվանումը և հաշվառման համարը (ՀՎՀՀ).

2) հարկ վճարողի գտնվելու վայրը (բնակության վայրը).

3) ինտերնետային կայքի հասցեն կամ էլեկտրոնային հավելվածի անվանումը.

4) այն իրական IP հասցեն կամ հասցեները, որից ուղարկվելու են կատարված գործարքների վերաբերյալ տվյալները:

3. Սույն կարգում նշված դիմումը հարկային մարմին ստացվելուց հետո էլեկտրոնային ՀԴՄ-ն դիմումում նշված տվյալներին համապատասխան ինքնաշխատ գրանցվում է հարկային մարմնի տեղեկատվական համակարգում:

4. Էլեկտրոնային ՀԴՄ-ն հարկային մարմնի նախաձեռնությամբ հանվում է գրանցումից՝

1) տվյալ գործունեության ոլորտում գործունեությունը դադարեցնելու, այդ թվում՝ կազմակերպության լուծարման, անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումից հանման կամ անհատ ձեռնարկատիրոջ մահվան դեպքերում.

2) վերակազմակերպվելու արդյունքում անմիջականորեն տվյալ կազմակերպության անվանմամբ էլեկտրոնային ՀԴՄ-ի կիրառումը դադարեցվելու դեպքում:

5. Կանխիկ դրամով, վճարային քարտերի միջոցով (չիպային, անհպում և մագնիսական), առկայության դեպքում նաև այլ վճարային տեխնոլոգիաների հիման վրա կիրառվող վճարային գործիքներով իրականացվող դրամական հաշվարկների համար օրենսգրքով էլեկտրոնային ՀԴՄ-ի կիրառության հնարավորություն նախատեսված չլինելու դեպքում, կիրառվող էլեկտրոնային ՀԴՄ-ները գրանցումից հանվում են հարկային մարմնի նախաձեռնությամբ՝ հարկային մարմնի համապատասխան ստորաբաժանման աշխատողների կողմից, ինչի վերաբերյալ կազմվում է արձանագրություն՝ երկու օրինակից: Կազմված արձանագրության մեկ օրինակը տրամադրվում է տնտեսավարող սուբյեկտի ղեկավարին կամ նրան փոխարինող պաշտոնատար անձին: Սույն կետում նշված դեպքում էլեկտրոնային ՀԴՄ-ի աշխատանքն արգելափակվում է հարկային մարմնի կողմից՝ մինչև էլեկտրոնային ՀԴՄ կիրառողի կողմից էլեկտրոնային ՀԴՄ-ն գրանցումից հանվելը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ